

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Հ.Հ. Պետրոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ի.Կ. Կարապետյան**

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ն.Դ. Դավոյան**

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ.Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. դեկտեմբերի 17-ին ժամը 12⁰⁰-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ.-ի նոյեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝

”


Ա.Հ.Սվազյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը. Վերջին տարիներին մասնագետների, մասնավորապես ուսուցիչների վերապատրաստման համակարգի արդիականացման միտումներ են նկատվում թե՛ զարգացող, թե՛ զարգացած երկրներում: Դա բացատրվում է նախ և առաջ այն հանգամանքով, որ այդ համակարգի կայացմամբ է պայմանավորված տվյալ երկրի տնտեսության, ընդհանրապես հասարակության շարունակական զարգացումը:

Այդ համատեքստում նպատակահարմար է ուսումնասիրել այն երկրների կրթական համակարգերը, որոնք կարող են նպաստել ՀՀ-ում ուսուցիչների որակավորման, վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը, դրանց որակի բարձրացմանը: Ինչպես հայտնի է, զարգացած եվրոպական երկրները և ԱՄՆ-ն ունեն հարուստ կրթական ավանդույթներ: Ավելին, Արևելյան Հայաստանը գտնվելով Ռուսաստանի կրթական տիրույթում, ինչ-որ տեղ նույն կրթամանկավարժական ավանդույթի շարունակողն ու զարգացնողն է եղել: Եվրոպական երկրները և ԱՄՆ-ն ունեն օտար լեզուների ուսուցիչների որակավորման բարձրացման հարուստ ավանդույթներ:

Օտար լեզուների ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման բավականին հարուստ ավանդույթներ են ձևավորվել ՀՀ-ում, երբ հաշվի ենք առնում խորհրդային և հետխորհրդային փորձը: Հատկապես վերջին տարիներին ՀՀ ԿԳ նախարարության կողմից լուրջ աշխատանքներ են կատարվել օտար լեզուների ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման գործը հավուր պատշաճի կազմակերպելու համար:

Ակնհայտ է, որ արդի փուլում օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման նպատակն ու խնդիրները շարունակական վերանայման անհրաժեշտություն ունեն: Ոչ որ չի կասկածում, որ օտար լեզու սովորելու հնարավորությունները ՀՀ-ում մեծացել են: «Երկաթյա վարագույրի» հետևանքները միանգամից հաղթահարելը շատ դժվար է, նախ և առաջ ֆինանսատնտեսական պատճառներով: Չի կարելի թերագնահատել ավանդույթի դերը: Հայ մանկավարժները պետք է հաղթահարեն բազում հոգեբանական, գաղափարախոսական բնույթի կարծրատիպեր և բարդույթներ: Մասնագետների ազատ տեղաշարժը շատ դեպքերում սահմանափակվում է ոչ միայն ֆինանսատնտեսական, այլև անբավարար շփման մշակույթի պատճառով: Ուսուցիչները դեռևս բավարար չափով չեն օգտվում ուսուցման հեռահաղորդակցական միջոցներից և տեխնոլոգիաներից: Լուրջ

դժվարություններ կան աշխարհի առաջատար ուսումնական հաստատություններում վերապատրաստվելու, գործուղումներ կազմակերպելու գործում: Անգամ հետխորհրդային հանրապետություններում կազմակերպվող գիտաժողովներին, ֆորումներին, տարբեր բնույթի հավաքներին մեր ուսուցիչները և դասախոսները դժվարությամբ են մասնակցում կամ չեն մասնակցում:

Օտար լեզուների ուսուցիչների որակավորման բարձրացման կազմակերպիչները պետք է հաշվի առնեն այն զարգացումները, որոնք տեղի են ունենում մեծահասակների մասնագիտական կրթության համակարգում աշխարհի տարբեր երկրներում:

Գիտամանկավարժական մակարդակում նույնպես հայ մանկավարժական հանրությունը մեծ անելիքներ ունի: Ուսուցիչների որակավորման բարձրացման հիմնախնդիրը տարբեր զարգացած երկրներում և ՀՀ-ում քննության է առնվել հոգեբանության, լեզվաքաղաքականության, մանկավարժության, սոցիոլոգիայի, լեզվադիդակտիկայի տեսանկյունից (Մ. Գ. Աստվածատրյան, Ա. Գ. Գասպարյան, Մ. Վ. Ղալաչյան, Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուրդյան, Ս. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ.Պետրոսյան, Շ. Վարդանյան, Н. К. Аникина, В. М. Базурина, К.Э. Безукладников, В.Б. Гаргай, О. С. Гладкова, А.В. Глазырина, Н. Н. Джемилева, Р. С. Димухаметов, Е. А. Букина, И.В. Крупина, М. А. Лобанова, М.А. Мосина, Э.М. Никитин, О. Н. Орлова, А.П. Ситник, И.Э. Савенкова, Е.Н. Соловова, Е.Э. Сысоева, Ир. Эд. Савенкова, И. Ю. Тарханова, А. А. Хатюшина, Л.И. Шаповалова և այլք):

Օտար լեզուների ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման գործընթացում առանձնակի նշանակություն ունի մենթորության տեխնոլոգիայի ներդրման հիմնախնդիրը (Լ. Ա. Անտոնյան, О.А. Лапина, Л.А. Магальник, Г. Льюис, П.Ф. Силенок, И.Г. Столяр, L. A. Daloz, M. Jacobi, K. M. Kerr, D. R. Schulze և L. E. Woodward, S.B. Murray, M., Stratton, P. Stephen և J. R. Owens, M. C. Terrell, R. K. Hassell և M. Duggar, N. H. Cohen և M.W. Galbraith և այլք):

Շարևորվում են օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման ընթացքում կիրառվող տեխնոլոգիաներին նվիրված աշխատանքները (И. Н. Авдеева, К. Э. Безукладников, Е. А. Букина, И. Д. Булюбаш, Дж. Винер, Р. Майзен, Дж. Дакхэм, Н. Д. Гальскова և այլք): Առանձնակի նշանակություն ունեն մանկավարժական, հոգեբանական ֆաաիլիտացիային կամ աջակցմանը նվիրված աշխատանքները (Р. С. Димухаметов, И.В. Жижина, К. Роджерс, И.Н. Авдеева և այլք): Նույն տրամաբանական հարթության վրա են

դիտարկվում մանկավարժական սուպերվիզիային և մոդերացիային նվիրված հետազոտությունները (С.А. Кулаков, М. Н. Певзнер, О. М. Зайченко, В. О. Букетов, С.Н. Горычева, А. В. Петров, А. Г. Ширин, Е. И. Сухова, В. А. Тышлаков, П. Ховкинс, П. Шохет, И. Д. Булюбаш, Дж. Винер, Р. Майзен, Дж. Дакхэм, И. Р. Лазаренко, М. А. Лобанова, А. П. Пересыпкин, Н. Argelander, Т. Bauriedl, М. Bosch և այլք):

Ակնհայտ է, որ նշված հասկացությունների, մոդերատորների, սուպերվիզորների գործառույթների ներմուծումը չպետք է լինի արհեստական, կրկնօրինակման, նմանակման անհաջող փորձ:

Կրթական հարուստ ավանդույթներ ունեցող զարգացած երկրներում օտար լեզուների ուսուցիչների որակավորման բարձրացման համակարգը դիտարկվում է մեծահասակների, շարունակական, հետբուհական կրթության շրջանակներում: Այդպիսի մոտեցումը պահանջում է վերանայել նախորդ դարի մոտեցումները, գիտելիքների փոխհատուցման, լրացման, հարմարման կադապարների փոխարեն առաջադրել օտար լեզուների ուսուցիչների որակավորման բարձրացման նոր կադապար:

Զարգացած եվրոպական երկրների և ԱՄՆ-ի օտար լեզուների ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման փորձի ուսումնասիրությունը կարևոր է հայ մանկավարժական հանրության համար: Մի կողմից, ՀՀ-ը չի կարող հաշվի չառնել տվյալ ոլորտում խորհրդային շրջանում կուտակված փորձը: Մյուս կողմից, խնդիր է դրվում ինտեգրվել ավելի բարձր զարգացում ապահովող երկրների կրթական տարածքներին:

Ուսուցիչների վերապատրաստման, որակավորման համակարգի եվրոպական և ամերիկյան փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ կադապարներ, մոտեցումներ, տեխնոլոգիաներ ոչ միայն ՀՀ-ում չեն կիրառվում, այլև անհայտ են:

Հետազոտության **հիմնախնդիրն** արդիական է դառնում տարբեր կրթական ավանդույթների տարբերությունների հաղթահարման, զարգացած երկրներում գոյություն ունեցող առաջավոր փորձի ներդրման, ժամանակակից կրթության պահանջներին համահունչ օտար լեզուների ուսուցիչների որակավորման բարձրացման ռազմավարության, դինամիկ կադապարի մշակման և ներդրման անհրաժեշտությամբ:

Հիմնախնդրի արդիականությունը և տեսագործական նշանակությունը հիմք հանդիսացան ձևակերպելու հետազոտության թեման՝ «Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման ժամանակակից հիմնախնդիրները»:

Հետազոտության նպատակն է մշակել ՀՀ-ում կազմակերպվող տարբեր որակավորման բարձրացման դասընթացներում կիրառելու արդյունավետ, դինամիկ կադապար, հաշվի առնելով արտերկրի և հայրենական կուտակված փորձը:

Հետազոտության օբյեկտը ուսուցիչների որակավորման բարձրացման համակարգն է զարգացած երկրներում և ՀՀ-ում:

Հետազոտության առարկան օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման հիմնախնդիրն է ՀՀ-ում:

Հետազոտության վարկածը. օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական վերաորակավորման և վերապատրաստման կազմակերպմանը, բարելավմանը միտված աշխատանքներն առավել արդյունավետ կդառնան, եթե ուսումնասիրվի զարգացած եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում, ինչպես նաև հայրենական հարուստ փորձը, վերապատրաստման հայտնի կադապարները, տեխնոլոգիաները և ստեղծվի ՀՀ-ի կրթական համակարգում արդյունավետորեն գործող որակավորման բարձրացման կադապար:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման եվրոպական և ամերիկյան առաջավոր փորձը, ժամանակակից մեթոդաբանական մոտեցումները:

2. Ուսումնասիրել օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական վերաորակավորման և վերապատրաստման հիմնախնդիրն վերաբերող մանկավարժական, հոգեբանական գրականություն:

3. Վերլուծել զարգացած եվրոպական երկրների և ԱՄՆ-ի, ինչպես նաև հայրենական այդ ոլորտում կուտակված հարուստ, առաջավոր փորձը:

4. Բացահայտել պրակտիկայում քննություն անցած մանկավարժական մոտեցումների, կադապարների, տեխնոլոգիաների, ռազմավարությունների առանձնահատկություններն օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման դասընթացների նախագծման, կազմակերպման, բարելավման տեսանկյունից:

5. Մշակել վերապատրաստման դասընթացների նախագծման, կազմակերպման, վերապատրաստող մասնագետների ընտրության, կոնկրետ դեպքերի և իրավիճակների վերլուծության, արդյունավետ կադապարների հարմարման, ինչպես նաև կիրառման օրինակելի կադապար:

Հետազոտության **մեթոդաբանական հիմք** են հանդիսացել՝

- Եվրոխորհրդի լեզվաբանականության մեթոդաբանական հիմքերը ներկայացնող (M. Koenig, J. Panthier, J. Sheils, M. Byram, J.Beacco),
- մարդակենտրոն (А.Б. Орлов , С. R. Rogers),
- կոմպլեքսային (Հ.Հ. Պետրոսյան, И.А. Зимняя, А.В. Хутарской, А.Г. Бермус, Н.С. Курникова Е.С. Семенова,),
- մեծահասակների կրթությանը նվիրված մանկավարժաճանաչական (И.Н.Липкина, В.П.Тарантей),
- շարունակական կրթության և մասնագիտական վերապատրաստման (Ա. Գ. Աստվածատրյան, О. С. Гладкова, И. Эд.Савенкова),
- մանկավարժական կադրերի որակավորման հիմնախնդիրներին նվիրված (М. А. Лобанова, А. П. Пересыпкин, И.Р. Лазаренко, Л.И. Шаповалова, М.Н.Певзнер, О.М.Зайченко, В.О.Букетов, С. Н. Горычева, А. В. Петров, А.Г.Ширин),
- որակավորման բարձրացման մարդաբանական (А.В Глазырина. М. Knowles, D. Long, S. Hase, С. Kenyon, L. G. Cairns, М. Malloch),
- արժեքական (В. Ю. Кричевский, В.А.Сластёнин, Р. Stephen, and R. James),
- ինտեգրատիվ-ռեֆլեքսիվ (Е.Н. Соловова, Е. Э. Сысоева),
- վարքաբանական (А. Bandura, В. F. Skinner),
- ճանաչողական (J. Snowman, R. Beeler, J. Greeno) մոտեցումները և հայեցակարգերը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության տարբեր փուլերում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝

- հիմնախնդրի վերաբերյալ մեթոդաբանական, ճանաչողական, մանկավարժական, մեթոդական գրականության, իրավական-նորմատիվային փաստաթղթերի, օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման հայրենական և արտասահմանյան փորձի վերլուծություն,
- վերապատրաստման դասընթացներին մասնակցած օտար լեզուների ուսուցիչների հարցում, նրանց աշխատանքի դիտում, զրույց, հարցազրույց,
- հետազոտության արդյունքների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով.

Առաջին փուլում (2012-2013) ընտրվել է հետազոտության թեման, որոշվել է հետազոտության մշակվածության աստիճանը, նպատակը և խնդիրները, առաջադրվել է

վարկածը: Ուսումնասիրվել և վերլուծվել է օտար լեզուների ուսուցիչների պատրաստմանը, վերապատրաստմանը վերաբերող գիտամանկավարժական գրականություն:

Երկրորդ փուլում (2013-2014) ուսումնասիրվել են օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական կարողությունների կատարելագործման ձևերը, ուսուցման մեթոդները, տեխնոլոգիաները, գնահատման գործիքակազմը, համեմատվել են հայրենական, եվրոպական և ամերիկյան կրթական տարածքներում առաջավոր համարվող օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման կառավարչական, կրթական, դաստիարակչական մոտեցումները, կադապարները:

Երրորդ փուլում (2014-2015) իրականացվել է օտար լեզուների ուսուցիչների դասընթացներում ներգրավված վերապատրաստողների, վերապատրաստվողների, կազմակերպիչների հետ հարցում, քննարկումներ, զրույց, բացահայտվել է նրանց վերաբերմունքը վերապատրաստման դասընթացների, կազմակերպման ձևերի, վերապատրաստվողներին և վերապատրաստողներին առաջադրվող պահանջների, ինչպես նաև այդ դասընթացները կատարելագործելու ուղիների նկատմամբ, առաջարկվել է վերապատրաստման օրինակելի կադապար:

Հետազոտության գիտական նորույթը.

Օտար լեզուների ուսուցիչների որակավորման բարձրացման ժամանակակից կադապարների, տեխնոլոգիաների, ռազմավարությունների ուսումնասիրության արդյունքում մշակվել է վերապատրաստման ինտեգրված դինամիկ կադապար, որը կարող է արդյունավետորեն կիրառվել օտար լեզուների ուսուցիչների, դասախոսների որակավորման բարձրացման տարբեր դասընթացներում:

Կոմպետենտային մոտեցման տեսանկյունից առաջադրվել են վերապատրաստողների, վերապատրաստվողների ընտրության, գնահատման, վերահսկողության հստակ պահանջներ, հստակեցվել են նրանց մասնագիտական ռեֆլեքսիայի մակարդակի ապահովման տեխնոլոգիաները և ռազմավարությունները, վերապատրաստողների մեթոդական մտածողության և վերապատրաստման մասնագիտական մշակույթի ձևավորման մանկավարժական պայմանները:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման առաջավոր փորձի, տեսությունների և մոդելների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են շարունակական կրթության առանձնահատկությունները եվրոպական

լեզվաքաղաքականության տեսանկյունից: Համեմատվել են օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական վերաորակավորման և վերապատրաստման արդիական կադապարները և դրա հիման վրա ստեղծվել է նոր կադապար: Մշակվել է օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման ռազմավարությունը, հաշվի առնելով ՀՀ-ի կրթական համակարգի առանձնահատկությունները:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման գործընթացում, ինչպես նաև նշված դասընթացների նախագծման, կազմակերպման, վերապատրաստող մասնագետների, անհրաժեշտ ուսումնամեթոդական գրականության ընտրության, համապատասխան դասախոսությունների տեքստերի, դասագրքերի, ուղեցույցների, ուսումնական ձեռնարկների ստեղծման, դասերի պլանավորման և անցկացման ընթացքում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1.Անձնակողմնորոշիչ-գործունեական, կոմպետենտային մոտեցման կիրառմամբ օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստումը ենթադրում է ոչ միայն գիտելիքների, կարողությունների, հմտությունների փոխանցում, այլև նոր ուսուցման տեխնոլոգիաների կիրառում, վերապատրաստողների ընտրության, գնահատման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, նրանց մասնագիտական ռեֆլեքսիայի պահանջվող մակարդակի ապահովում, մասնավորապես մեթոդական մտածողության և վերապատրաստման մասնագիտական մշակույթի ձևավորում:

2.Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման ֆասիլիտացիայի, սուպերվիզիայի, մենթորության տեխնոլոգիաներն արդյունավետ են ուսուցչի ինքնաճանաչողության, ինքնագնահատման, ինքնավերահսկման գործընթացում: Նշված տեխնոլոգիաների յուրացման և կիրառման անհրաժեշտ պայման է վերապատրաստման դասընթացների հստակ մեթոդաբանությամբ, ծրագրերով, ժամանակացույցով, պարբերականությամբ կազմակերպումը, անհրաժեշտ վերապատրաստող կադրերի ընտրությունը, հանրապետական և միջազգային տարբեր շահագրգիռ հաստատությունների, կառույցների, կազմակերպությունների հետ համագործակցումը, դրամաշնորհային ծրագրերի մասնակցությունը, ուսումնատեխնիկական, հեռահաղորդակցական ռեսուրսների ապահովումը, վերապատրաստման ռազմավարության մշակումը:

3. Ֆասիլիտացիայի, մոդերացիայի, մենթորության և դրանց առնչվող տեխնոլոգիաների, նրանց հիման վրա մշակված սկզբունքների արժեքանական, ակմեոլոգիական, սիներգետիկ մոտեցումների տեսանկյունից դիտարկումը հիմք դրեց օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման նոր կադապարների նախագծմանը:

4. Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման օպտիմալ կադապարի ստեղծումը նոր մեթոդաբանական հիմքի վրա է դրվում, երբ գիտնականները այն սկսում են դիտարկել ուսուցչի մասնագիտական-հաղորդակցական մշակույթի ձևավորման տեսանկյունից:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում է քննարկման ենթակա ուղղությունների և մոտեցումների համապարփակ ուսումնասիրությամբ, առաջադրվող հիմնադրույթների նոր մեթոդաբանական դիրքերից հիմնավորվածությամբ, առաջարկվող վերապատրաստման արդյունավետ կադապարի ՀՀ-ի տիրույթում կիրառելիությամբ, հետազոտական մեթոդների համալիր գործածությամբ, մարդաբանական-աջակցող վերապատրաստման կադապարի արդյունավետությամբ:

Ուսումնասիրության փորձաքննությունը.

Հետազոտության արդյունքները զեկուցվել և արժանացել են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության, մանկավարժության տեսության և պատմության ամբիոններում:

Հետազոտության ներդրումը. Հետազոտության արդյունքները ներդրվել են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության, մանկավարժության տեսության և պատմության ամբիոնների կողմից կազմակերպված տարբեր սեմինարների, քննարկումների ժամանակ: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հինգ հոդվածներում (տե՛ս անվանացանկը ատենախոսության սեղմագրի վերջում):

Հետազոտության կառուցվածքը եվ ծավալը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է հակարգչային 149 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտն, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրությունները:

Ատենախոսության առաջին **«Օտար լեզուների ուսուցիչների որակավորման բարձրացման միտումները զարգացած երկրներում և ՀՀ-ում»** գլխում, որը բաղկացած է երեք ենթագլխից, ուսումնասիրվում և բացահայտվում են օտար լեզուների ուսուցիչների որակավորման բարձրացման առանձնահատկություններն արդի փուլում:

Առաջին գլխի առաջին **«Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման ժամանակակից հիմնախնդիրները»** ենթագլխում ներկայացվում են օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման պատմությունը, պայմանները, ձևերը, մեթոդները, բացահայտվում են հիմնական միտումները:

Նշվում է, որ Հայաստանում օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման հիմքերը դրվեցին դեռևս նախորդ դարի սկզբում, երբ կազմակերպվում են ուսուցիչների համար դասընթացներ:

Կարևորվում են Մ.Վ. Ղալաչյանի, Վ.Բ. Գարգայի, Օ.Ն. Օրլովայի, Ռ.Ս. Դիմուխամետովի, Ն.Ն. Ջեմիլևայի, Բ.Ա. Կրուգեի աշխատանքները, որոնցում բացահայտվում են անգլո-ամերիկյան և գերմանական, ռուսական, բուն հայրենական ավանդույթների ընդհանուր և տարբերակիչ կողմերը մեթոդաբանական, տեսական, տերմինաբանական, կառավարման, կազմակերպչական մակարդակներում:

Ներկայացվում են օտար լեզուների ուսուցիչների դպրոցական, փոխհատուցման, հարմարման և այլ կադապարները: Ներկայացվում են նաև ֆրանսերենի, անգլերենի, գերմաներենի ուսուցիչների վերապատրաստման գործընթացները ՀՀ-ում հետխորհրդային շրջանում:

Հետխորհրդային շրջանի առանձնահատկություններից մեկն այն է, որ հայ ուսուցիչները սկսեցին վերապատրաստվել ոչ միայն արտասահմանցի վերապատրաստողների կողմից ՀՀ-ում, այլև արտերկրում: Մի կողմից, ԿԳՆ և ԿԱԻ կողմից մշակվեցին և ներդրվեցին վերապատրաստման նոր ծրագրեր: Մյուս կողմից, թե՛ ԿԳ նախարարության մակարդակում, թե՛ առանձին բուհերի և դպրոցների մակարդակում, օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպիչները սկսեցին

համագործակցել լեզվակիր երկիրները ներկայացնող վերապատրաստող կազմակերպությունների, առանձին անձանց հետ:

Դրական տեղաշարժ է նաև այն, որ տարբեր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում թարգմանվեցին և ներմուծվեցին մանկավարժական, լեզվադիդակտիկական, ուսուցման և վերապատրաստման տեխնոլոգիաներին վերաբերող հարուստ գրականություն (ԼԻԻՀ, ԳԹԼ, Գծագրական դասակարգիչներ):

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Օտար լեզուների ուսուցչի մասնագիտական կոմպետենտության հիմնական բաղադրիչները»** սահմանվում է «կոմպետենտություն» հասկացությունը, ներկայացվում են օտար լեզուների ուսուցչի մասնագիտական, մեթոդական կոմպետենտության բաղադրիչները:

Ներկայացվում են Կ.Ս. Մախմուրյանի, Գ.Ա. Կիտայգորոդսկայի, Ն.Վ. Սոլովովայի, Ա.Ա. Լյուբոտիսկու, Ռ.Պ. Միլրուդի մոտեցումները:

Վերլուծվում է Ա.Ա. Լյուբոտիսկու կողմից առաջարկվող մեթոդական կոմպետենտության կառուցվածքային–գործառական կաղապարը, որն այն դիտարկում է ըստ ձևավորման փուլերի՝ ընկալողական, վերարտադրողական, արտադրողական, ռեֆլեքսիվ:

Երրորդ **«Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման ժամանակակից տեխնոլոգիաները»** ենթագլխում հանգամանորեն վերլուծվում են ուսուցման ժամանակակից, այլընտրանքային տեխնոլոգիաները: Սահմանվում է «մենթորություն», «ֆասիլիտացիա», «սուպերվիզիա», «մոդերացիա» հասկացությունները:

Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպման տեսանկյունից վերլուծվում է Սթրաթոնի և Օուենսի մենթորության կաղապարը, որի հիմքում ընկած են ճանաչողական, վարքաբանական և հուզագգայական խորհրդատվական տեսությունները:

Նշվում է, որ ֆասիլիտացիան անձնակենտրոն հոգեթերապիայի հիմնական հասկացություններից է, որը մշակել է Կ.Ռոջերսը: Ըստ այդմ, վերապատրաստող մասնագետները պետք է տիրապետեն աջակցման տեխնոլոգիային և պետք է կարողանան ունկնդիրների մոտ ձևավորել ազատամտություն, ինքնուրույն, ստեղծագործաբար աշխատելու ունակություններ: Դա վերաբերում է թե՛ բուն ուսուցմանը, թե՛ ծրագրեր կազմելուն, թե՛ արդյունքների գնահատմանը: Նշված համատեքստում կարևորվում են «ապրումակցում» և «կոնգրուենտություն» եզրույթները:

Ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներից առանձնացվում է լեզվական թղթապանակը, որը հնարավորություն է տալիս ճիշտ և օբյեկտիվ գնահատել բազմալեզու և բազմամշակույթ ուսուցիչներին (Մ. Գ. Աստվածատրյան, Գ. Թերզյան, Է. Թադևոսյան, Խ. Փ. Коряковцева, E. S. Ellis & B. K. Lenz):

Նշվում է, որ վերապատրաստող մենթորի, ֆասիլիտատորի կամ մոդերատորի դերակատարությունը ՀՀ-ում և զարգացած եվրոպական երկրներում նույնը չի կարող լինել: Ինչ վերաբերում է ԵԼԹ-ի գործառույթների ներկայացմանը, ապա ցանկացած կրթական տարածքում դրանք ուղղված են ուսուցման և գնահատման գործընթացում սովորողների ինքնուրույնության ձևավորմանը: Այս պարագայում կարևորվում է վերապատրաստման տևողությունը և բովանդակությունը, քանի որ կարճաժամկետ վերապատրաստման ժամանակ դժվար է ծանոթացնել ԵԼԹ-ի գործառույթների հետ՝ հատկապես գնահատման, ինքնագնահատման մակարդակում:

Ատենախոսության երկրորդ **«Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման ժամանակակից կադապարները»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման գերմանական կադապարը»** ենթագլխում ներկայացվում է գերմանական առաջավոր փորձը, ուսուցման հեռավար, հեռահար տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրը: Նշվում է այն փաստը, որ Գերմանիայում հետբուհական կրթությունը իրականացվում է տարբեր՝ մասնավոր, հասարակական, եկեղեցիական, արմիութենական և այլ կրթական հաստատությունների միջոցով:

Երկրորդ **«Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման կադապարները ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում»** ենթագլխում համեմատական կտրվածքով ներկայացվում են ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համապատասխան փորձը: Եվս մեկ անգամ շեշտադրվում է այն փաստը, որ նշված երկրներում որակավորման բարձրացման դասընթացները մշակվում են կոմպետենտային մոտեցման տեսանկյունից: Այդ համատեքստում կարևորվում է նաև այն հանգամանքը, որ բարձրագույն մասնագիտական չափորոշիչները մշակվում են ոչ թե պետության, այլ տարբեր ուսումնական հաստատությունների կողմից:

Համապատասխան վերլուծությամբ բացահայտվել է, որ Մեծ Բրիտանիայի բուհերը առաջնորդվում են աշխատաշուկայի պահանջունքներով: Այդ համատեքստում առանձնացվում են ֆասիլիտատորի և թյուրթորի մասնագիտությունները, քանի որ դրանք ուղղակիորեն բացակայում են ՀՀ-ում:

Ինչ վերաբերում է բրիտանական ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի բովանդակությանը, ապա դրանց կազմողները հաշվի են առնում տարածաշրջանային առաջնահերթությունները, դպրոցների կոնկրետ պահանջմունքները: Նշված ծրագրերը ներառում են ըստ մոդուլային սկզբունքի երեք փոխկապակցված առարկայախմբեր՝ սոցիալ-հոգեբանական, մասնագիտական-մանկավարժական, մասնավոր-առարկայական:

ՀՀ-ի կրթական տարածքի համար նորույթ է որակավորման բարձրացման համակարգի ընդլայնված գործառույթը, որը ենթադրում է պատրաստել ուսուցիչներին երկրորդ առարկայի դասավանդելուն: Դա երևի բացատրվում է այն հանգամանքով, որ օտար լեզուների ուսուցիչները հիմնականում դասավանդում են մեկ օտար լեզու, չնայած բուհում նրանք ստանում են երկու օտար լեզու դասավանդելու որակավորում:

Ինչ վերաբերում է որակավորման բարձրացման համակարգի նորարարական գործառույթին, ապա այն նույնպես հայրենական վերապատրաստողների համար նորությունն չէ: Վերջին տարիներին ՀՀ-ում նույնպես փորձ է արվում իրականացնել որակավորման բարձրացման մասնագիտացնող գործառույթը: Օտար լեզվի ուսուցիչները հիմնականում փորձում են ձեռք բերել լրացուցիչ որակավորում կրթության կառավարման ոլորտում:

ՀՀ-ի կրթական տարածքի համար նորույթ է նաև համալսարաններին կից անկախ խորհրդատվական խմբերի ձևավորումը:

Նշված կադապարների համապարփակ վերլուծության արդյունքները կարող են նպաստել ՀՀ-ում ինչպես օտար լեզուների ուսուցիչների պատրաստման, այնպես էլ վերապատրաստման, որակավորման բարձրացման նոր կադապարների ստեղծմանը, գոյություն ունեցող մոտեցումների գնահատմանը և վերանայմանը, դրական փորձի ներդրմանը:

Վերջին **«Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման մարդաբանական-ֆասիլիտացիոն կադապարը»** ենթազվիտում հանգամանորեն ներկայացվում է որակավորման բարձրացման մարդաբանական-ֆասիլիտացիոն կադապարը, որի հիմքում ընկած են խնդրո առարկան ներկայացնող, իրենց արդյունավետությունը ապացուցած կադապարները:

Նշվում է, որ որակավորման բարձրացման տեխնոլոգիաները՝ համակարգչային, հեռահաղորդակցական, ֆասիլիտացիա, մոդերացիա, մենթորություն, դասերի վերլուծություն նույն հաջողությամբ կարելի է կիրառել ՀՀ-ում:

Առաջարկվող կադապարի կիրառման պայմանները և հնարավորությունները գնահատելու համար մենք Երևանի տարբեր դպրոցների ուսուցիչների /թիվ 5, 7, 24, 29, 114, 119, Մ.Մաշտոցի անվան/ և բուհերի /ՀՊՄՀ, ԵԼՊՀ/ դասախոսների շրջանում անցկացրել ենք հարցում: Հարցում ենք անցկացրել տարբեր դասընթացներում մասնակցություն ունեցած /բուհական, արտասահմանում, արտասահմանցիների կողմից կազմակերպվող/ օտար լեզուների ուսուցիչների շրջանում: Նպատակն է եղել պարզել նրանց մեթոդական կոմպետենտության մակարդակը, բացահայտել, նրանց վերաբերմունքը ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացների նկատմամբ: Հարցման են ենթարկվել անգլերենի, գերմաներենի և ֆրանսերենի շուրջ 69 ուսուցիչ և դասախոս: Սկզբում նրանց առաջարկվում են հնարավորինս պարզ հարցեր, որոնց պատասխանների օբյեկտիվությունը ստուգվում է հաջորդ հարցաշարերի միջոցով:

Իրականացված հարցումը, անհատական զրույցները, անմիջական և միջնորդավորված դիտարկումները հնարավորություն տվեցին ընդհանուր պատկերացում կազմել օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման արդի միտումների մասին ՀՀ-ում: Կարելի է պնդել, որ թե՛ վերապատրաստողների, թե՛ վերապատրաստվողների, թե՛ այն ուսուցիչների, ովքեր դեռևս չեն վերապատրաստվել մեթոդական կոմպետենտության մակարդակը խիստ տարբերվում է:

Այն փաստը, որ ՀՀ-ի կրթական տարածքը ներկայացնող մասնագետների մի մասը գտնում է, որ մենք կարող ենք մեր ուժերով վերապատրաստել մեր ուսուցիչներին, նախ և առաջ բացատրվում է նրանով, որ հայ վերապատրաստողները չեն ուզում մնալ առանց աշխատանքի: Շատ դեպքերում լեզվակիր-վերապատրաստողները թույր պատկերացում ունեն հայ մասնագետների մասին: Զգացնել է տալիս մենթալիտետի, հոգեբանական, մշակութային տարբերությունները:

Կարևոր առաջարկությունն այն է, որ հայրենական և արտերկրի վերապատրաստողները համագործակցեն թե՛ ծրագրեր կազմելիս, թե՛ դասընթացներ նախագծելիս, թե՛ բուն վերապատրաստումն անցկացնելիս: Լուրջ և կարևոր խնդիր է հայրենական վերապատրաստողների վերապատրաստումը արտերկրում:

Մենք առաջարկում ենք այդ գործը պլանավորել և կազմակերպել, հաշվի առնելով ՀՀ-ի բոլոր ուսումնական հաստատությունների ներուժը և պահանջները:

Գտնում ենք, որ միայն դրամաշնորհային ծրագրերով օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստումը չի կարող լինել արդյունավետ, քանի որ վերապատրաստումների

տնտեսությունը, պարբերականությունը, ուսուցման տարբեր տեխնոլոգիաների կիրառումը, ուսուցիչների մշտադիտարկումը, տարբեր հաստատությունների համագործակցության, կառուցողական մրցակցության ապահովումը միայն կարող են տալ ցանկալի արդյունք, ապահովել բուհական, հետբուհական կրթության շարունակական կապը:

Եզրակացություն

1. Եվրոպական զարգացած երկրներում և ԱՄՆ-ում օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպումն ունի ընդհանուր և տարբերակիչ կողմեր: Տարբերությունները վերաբերում են դասընթացների կազմակերպման տեղին /դպրոց, բուհ, մասնագիտացված կենտրոն/, տնտեսությանը, վերապատրաստող կադրերին, դասավանդման եղանակներին և ձևերին, վճարման, ֆինանսավորման կարգին, վերապատրաստման պարբերականությանը, օրենքով ամրագրված լինելուն կամ չլինելուն, ինչպես նաև պահանջվող կրեդիտների քանակին, վերապատրաստման ընթացքում ուսուցման նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը, արտասահմանյան փորձագետների հետ համագործակցությանը և այլն:

2. Դիտարկելով օտար լեզուների ուսուցչի մեթոդական և մասնագիտական կոմպետենտության հիմնախնդիրը շարունակական կրթության շրջանակներում, վերապատրաստողները կարողացան կիրառել նոր, ժամանակակից ուսուցման, մասնավորապես ստեղծագործական, քննադատական մտածողության կարողությունների ձևավորման, անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաներ, ներգարվել ուսուցիչներին հետազոտական ծրագրերի, նախագծերի մեջ:

Վերապատրաստող-ֆասիլիտատորները հաշվի առնելով մեթոդական կոմպետենտության զարգացման առանձնահատկությունները, պետք է նախ և առաջ շեշտը դնեն վերապատրաստողների ռեֆլեքսիվ մակարդակի ձևավորման վրա, քանի որ միայն այդ մակարդակում հնարավոր է ճիշտ, ժամանակին գնահատել սեփական գործունեությունը, ինքնուրույն որոշումներ կայացնել:

Ավանդաբար, օտար լեզվի ուսուցիչներն ուշադրություն են դարձնում իրենց լեզվամտածողության զարգացման վրա: Մակայն մեթոդական մտածողության ձևավորման հիմնախնդիրը շատերի կողմից չի գիտակցվում:

3. Ուսուցիչների որակավորման բարձրացման գործընթացում կարևորվում են

հեռահաղորդակցական տեխնոլոգիաները, որոնք նպաստում են տարբեր կարծրատիպերի հաղթահարմանը, նոր դիրքորոշումների, նպատակադիրքորոշումների ձևավորմանը, ինչպես նաև լսարանային /դասարանային/ և հեռավար ուսուցման, գյուղական և քաղաքային դպրոցների միջև գոյություն ունեցող անջրպետը:

4. Ինչպես ցույց են տալիս եվրոպական զարգացած երկրների, ինչպես նաև ԱՄՆ-ի օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման կադապարները, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը պարտադիր պայման է համապատասխան որակի ապահովման տեսանկյունից: Ընդ որում՝ հեռավար ուսուցման տեխնոլոգիաներն ուսուցանվում և կիրառվում են ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման տարբեր փուլերում: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ուսուցման համակարգչային-հեռահաղորդակցական տեխնոլոգիաները ավելի արագ են փոփոխվում: Փոփոխվում է նաև դրանց կիրառման ոլորտները:

5. Գերմանիայի մասնագետների որակավորման բարձրացման համակարգի առանձնահատկություններից մեկն այն է, որ մեծ տեղ է հատկացվում օտար լեզուների ուսուցիչների հոգեբանամանկավարժական, տեսագործնական պատրաստվածությանը: Մոդերատորների, սուպերվիզորների և թյուրորների ուսուցման համակարգի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի հայ մանկավարժական հանրության համար, քանի որ մոդերատորները և սուպերվիզորները մեծ դեր են խաղում մասնագետների որակավորման բարձրացման համակարգում:

6. ՀՀ-ի կրթական տարածքի համար նորույթ է որակավորման բարձրացման համակարգի ընդլայնված գործառույթը, որը ենթադրում է պատրաստել ուսուցիչներին երկրորդ առարկայի դասավանդելուն: ՀՀ-ի կրթական տարածքի համար նորույթ է նաև համալսարաններին կից անկախ խորհրդատվական խմբերի ձևավորումը:

7. Օտար լեզուների ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման, օտար լեզուների ուսուցչի մասնագիտական բնութագրի, դասընթացային, որակի բարձրացման կադապարը, հարմարման, խորհրդատվական ծառայություն մատուցելու, սոցիալական փոխգործակցության, որակի գնահատման, սոցիալ-տնտեսական բնույթի, վարքագծային, փոխներգործուն, անձնային կամ անձնակողմնորոշիչ, ուսուցման ռեֆլեքսիվ, սոցիալ-հոգեբանական, ուսուցիչների որակավորման բարձրացման մասնագետի կադապարները դիտարկվում են շարունակական կրթության համատեքստում, հաշվի առնելով մասնագետների

պատրաստման Եվրոխորհրդի կողմից իրականացվող լեզվական քաղաքականության սկզբունքները, հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման միտումները:

8. Հաշվի առնելով օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման անձնակողմնորոշիչ կադապարի բաղադրիչները՝ /դրդապատճառային-արժեքային, ճանաչողական-ինտեգրատիվ, արտադրողական-գործունային, հուզագգայական-ռեֆլեքսիվ, կազմակերպչական, հաղորդակցական/, հնարավոր է դառնում հստակեցնել ոչ միայն վերապատրաստվողների հաղորդակցական, մասնագիտական և այլ կոմպետենցիաներին ներկայացվող պահանջները, այլև որոշել կոնկրետ դասընթացի շրջանակներում վերապատրաստող-ֆասիլիտատորների, մոդերատորների ընտրության, նրանց աշխատանքի վերահսկողության, մշտադիտարկման և գնահատման չափանիշները:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ
հրապարակումներում.**

1. «Ուսուցիչների վերապատրաստման գերմանական կադապարը», ՀՊՄՀ-ի 90 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, պրակ 1, Երևան 2012 թ., էջ 430-434:
2. «Ուսուցիչների վերապատրաստման ժամանակակից մոտեցումները», «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, N 8, Երևան 2013թ., էջ 55-58:
3. «Օտար լեզուների ուսուցչի մեթոդական կոմպետենտությունը», «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր, Իջևան 2015թ., էջ 252-257:
4. «Проблема повышения квалификации учителей в Республике Армения», «Развитие современного образования: теория, методика и практика», N 4, Чебоксары 2015թ., էջ 10-11:
5. «Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման կադապարները Մեծ Բրիտանիայում», «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հոդվածների ժողովածու, N 6, Երևան 2015թ., էջ 87-93:
6. «Օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման ֆասիլիտացիոն-մարդաբանական կադապարը», «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» գիտամեթոդական հանդես N 3, Երևան 2015թ., էջ 14-22:

АНДРЕАСЯН ГАЙК ОГАННЕСОВИЧ
СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ПЕРЕПОДГОТОВКИ УЧИТЕЛЕЙ ИНОСТРАННЫХ
ЯЗЫКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 - "Теория и история педагогики"

Защита диссертации состоится 17-го декабря 2015 г. в 12⁰⁰ на заседании специализированного совета по педагогике 020 "Педагогики" ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010 г. Ереван. Ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Изучение опыта подготовки и переподготовки учителей иностранных языков в развитых европейских странах и США имеет большое значение для армянского педагогического сообщества. С одной стороны, в РА не могут не учесть богатый отечественный опыт переподготовки учителей иностранных языков. С другой стороны, подчеркивается значение интеграции в высоко развитые образовательные пространства.

Исследование ведущих систем переподготовки учителей иностранных языков в европейских странах и США показывает, что многие модели, подходы, технологии в основном не используются в РА.

Актуальность исследования обосновывается необходимостью сравнения разных образовательных традиций, внедрения передового опыта развитых стран, разработки и внедрения стратегии и динамической модели повышения квалификации учителей иностранных языков в образовательное пространство РА.

Целью исследования является изучение передового опыта подготовки и переподготовки учителей иностранных языков развитых европейских стран и США и разработка эффективной, динамической модели внедрения положительного опыта в образовательное пространство РА.

Задачи исследования.

1. изучить педагогическую, психологическую литературу по проблемам подготовки и переподготовки учителей иностранных языков,
2. проанализировать передовой опыт в области подготовки и переподготовки учителей иностранных языков, накопленный в европейских странах и США, а также в Армении,
3. выявить особенности педагогических подходов, моделей, технологий, проверенных на практике с точки зрения проектирования, организации и улучшения курсов переподготовки учителей иностранных языков,
4. разработать эффективную, динамичную модель проектирования, организации курсов переподготовки, отбора специалистов-фасилитаторов переподготовки учителей, анализа конкретных событий и ситуаций, адаптации эффективных моделей.

Научная новизна исследования.

В результате изучения моделей, технологий, стратегий повышения квалификации учителей иностранных языков разработана интегрированная, динамичная модель, которая может быть эффективно использована в разных курсах повышения учителей и преподавателей иностранных языков.

С точки зрения компетентного подхода предложены четкие требования к отбору и оценке, контролю учителей и преподавателей-тренеров, определены технологии и стратегии обеспечения их профессионального уровня, педагогические условия формирования методического мышления и культуры профессиональной переподготовки преподавателей-тренеров.

Теоретическое значение исследования.

Изучен передовой опыт переподготовки учителей иностранных языков в высоко развитых европейских странах и США, выявлены особенности непрерывного образования в развитых странах с точки зрения европейской языковой политики. В результате сравнения и сопоставления современных моделей переподготовки учителей создана динамичная модель и стратегия переподготовки учителей иностранных языков, с учетом особенностей образовательной системы РА.

Практическое значение исследования.

Результаты исследования могут быть внедрены в курсах переподготовки учителей иностранных языков, а также в процессе проектирования, организации соответствующих курсов, отбора специалистов-фасилитаторов, учебно-методической литературы, составления и создания учебников, учебных пособий, планирования и проведения уроков.

Апробация результатов исследования.

Обеспечивается изучением рассмотренных направлений и подходов, обоснованием выдвинутых положений с новых методологических позиций, применением предложенной эффективной модели, комплексным использованием исследовательских методов, продуктивностью андрагогической - фасилитационной модели.

Апробация результатов исследования.

Результаты исследования были представлены на кафедрах профессионального образования и прикладной педагогики, теории и истории педагогики в АГПУ им. Хачатура Абовяна. Результаты проведенного опроса подтвердили эффективность андрагогической - фасилитационной модели переподготовки учителей иностранных языков в РА.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликовано 6 статей.

ANDREASYAN HAYK HOVANNES

THE MODERN PROBLEMS OF RETRAINING FOREIGN LANGUAGE TEACHERS

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 – "Theory and History of Pedagogy".

The defense of the thesis will be held in December 17, at 12⁰⁰, 2015 at the session of the Special Board 020 "Pedagogy" HAC to award degrees under the Armenian State Pedagogical University. After Kh. Abovyan, address: 0010, st. Tigran Mets 17, Yerevan.

REZUME

The relevance of the study. It is very important to study the positive experience of training and retraining foreign language teachers in developed European countries and the United States for the Armenian educational community. On the one hand, Armenia cannot help taking into account the rich experience of teacher training gained in the USSR. On the other hand, it emphasizes the importance of integrating into highly developed educational spaces.

The investigation of foreign language teacher retraining systems in Europe and the United States shows that many models, approaches, technologies are not either used or known in RA.

The relevance of the research justifies by the necessity to overcome the differences between educational traditions, introduces the best practices of developed countries, develops and implements the strategy and the dynamic model of retraining into educational system of RA.

The aim of the research is to study foreign language teacher training, retraining experience of developed European countries and US and to develop effective dynamic retraining model based on their positive experience.

The objectives of the research:

1. To study pedagogical and psychological literature on the problem of foreign language teachers' professional training and retraining.

2. To analyze the progressive experience of retraining foreign language teachers in developed European countries and the USA, as well as in Armenia.

3. To reveal the peculiarities of pedagogical approaches, models, technologies, strategies proved in practice and from the standpoint of designing, organizing and improving retraining courses.

4. To develop the effective, dynamic model of designing, organizing retraining courses, selecting teacher trainers, analyzing certain events and situations, adapting effective models.

The scientific novelty:

As a result of studying the foreign language teacher retraining models, technologies, strategies the integrative, dynamic model was developed, which can be effectively used in different foreign language teacher and lecturer retraining courses. It produces distinct demands from the point of view competent approach to selecting, assessment, control of teachers and teacher-trainers and determines the technologies and strategies of providing their professional level, pedagogical conditions of forming methodological thinking and culture of professional retraining teacher trainers.

The theoretical significance of the research.

It studies a foreign language teacher professional retraining progressive experience in advanced European countries and the US, reveals the peculiarities of continuing education from the point of view of Common European Language Policy. It compares modern foreign language teacher retraining models and creates the new one. It develops foreign language teacher professional retraining strategy, taking into account the peculiarities of the educational system of RA.

Practical significance of the research.

The results of the research will be implemented in the process of retraining foreign language teachers, as well as designing, organizing and training specialists, selecting educational literature, creating texts of lectures, textbooks, guides, manuals, planning and conducting lessons.

The approbation of the research.

The research results were presented at the departments of Vocational Training and Applied Pedagogy, Theory and History of Education in ASPU after Khachatur Abovyan. The results of the survey confirm the effectiveness of andragogical–facilitating model of foreign language teacher retraining in Armenia.

The content of research is reflected in the structure of the thesis, which consists of an introduction, two chapters, conclusions, bibliography and appendices.

On the topic of the dissertation published 6 articles.